համար դռան կողքին թողնված է փրկածակ: Դուռն ունենում է միջին հասակի մարդու բարձրություն. քիչ շատ ավելի բարձրահասակ կամ փափախավոր մեկը մտնելիս պիտի կռանա: Դուռը շրջվում է ոչ թե մի կողքով շրջանակից կախված լինելով, այլ վերևից և ներքևից ունեցած կրունկնէրավ՝ սռնակներով:

Դռնով հացատօնից դուրս են գալիս սրհարր, ուր ընտանիքը փոխադրվում է հենց առաջին տաք օրերի հաստատման պես՝ ներսի մթությունից, խոնավությունից և ծխով հագեցված օդից ազատվելու համար և որտեղից կրկին ներս են մտնում հացատօնր հնարավոր եղածին չափ ուշ, երբ ցրտերն արդեն զգալի են դառնում: Դա աջ և ձախ կողմերից պատերով սահմանափակված և առջևից բաց լայն պատշգամբ է, 5—7 սյուներով՝ սռïրöïննէրավ, բակից անջատված: Հարթ կտուրը միացած է հացատօնի տանիքի հետ և նրա պես ծածկված է հաստ հողի շերտով: Անձրևի և ձնհալքի ջրերի հեռացման համար նրանից էլ դուրս են ցցված փայտե շրռաննէր: Կողքի պատերից մեկի մեջ, սովորաբար դռանն ավելի մոտիկ, բացված է բուխարու–օջախի լայն բերանը, որի ծուխը բարձրանում է պատի մեջ թաղած ծխանավ: Այստեղ է կրակի վրա պատրաստվում կերակուրը՝ ամանը երկու քարերի կամ կասկարայի վրա դրած: Սրհարի մի կողմը հատկացվում է մատաղ անասուններին, հորթերին, ուլերին և քուռակին: Հետևի պատի տակ սարքված է տախտ՝ գետնի մեջ ցցված կամ ազատ ոտներով, որի վրա կարող է ձգվել երկու-երեք անկողին, գլխավորապես ընտանիքի ծեր և հասակավոր անդամների և հարգէվօր հյուրերի համար: Հացատօնի ներսն այսպիսի տախտ միայն շատ նոր ժամանակներումն է սկսել սարքվել: Այնտեղ թե՛ փոքրը և թե՛ մեծը, տանեցին, թե հյուրը, քնում էր գետնին, խսիրներին, գորգերին, թաղիքներին փռված անկողինների վրա: Սրհարի հատակն այնքան խնամքով տփած և հարդախառն ու մաղախառն կավով սվաղած չէր լինում, որքան ներսում: Լավ տանտիկինը օգտվում է հանգամանքից և երբ ընտանիքը փոխադրվում է սրհարր, նա հարսների ու աղջիկների օգնությամբ մաքրում է երկարատև ձմեռվա ընթացքում կիսատ մաքրված և խիստ մրոտված ու կեղտոտված հացատօնր: Առաստաղի և պատերի փոշիներն ու սարդի բները վեր են բերվում, գերաններն ու սյուները լվացվում են, մանր իրերը դուրս են բերվում, մաքրվում, արևին դրվում...

Մաքրվում և կարգի է բերվում նաև մառանր, այն փոքրիկ սենյակը, որն ամեն հացատօն աշխատում է իրեն կից ունենալ: Դա շինվում է հացատօնի որևէ պատին կպած, միակ մուտքը հացատօնիցն է: Սա մի մութ, սակավ դեպքերում իր հատուկ հöïրթավ կամ առաստաղի մոտ թողած ծակով լույս ստացող զետեղարանն է, որը Լեռնային Ղարաբաղում կոչվում է ֆրհօլ՝ քարայր, քանի որ մեծ մասամբ փորված է լինում ժայռի կամ հողի մեջ, նույնիսկ չի ունենում կողքերին շարված պատեր: Մառանում պահվում է տան պաշարեղենի մի մասը: Այստեղ են առանձնացնում նորապսակների առագաստանկողինը, այստեղ են հյուրերի աչքերից հեռանում մատաղահաս հարսները: Սակայն, պատահում է, որ մառաննէրն էլ ունենում են լավ շարված պատեր և լավ ձևավորված յէրթիկավօր առաստաղ: Այս դեպքում նա դառնում է տան օթախր:

Հայերի հարևան ադրբեջանցիք էլ, մանավանդ այնտեղ, որտեղ նրանք անցել են նստակյաց կյանքի և հողամշակության, իրենց բնակարանները կառուցում են հացատօնի ճարտարապետական ձևէրով. մեծ մասամբ այստեղ էլ,